ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Բնական և հասարակական աշխարհագրությունների շփման գոտում ո՞ր ուղղությունն է առաջացել։**

1) ռեկրեացիոն աշխարհագրություն
2) կլիմայագիտություն
3) հողերի աշխարհագրություն
4) կենսաաշխարհագրություն

2 **Հասարակածից 0-ական միջօրեականով դեպի Հարավային բևեռ շարժման ուղղությունը ի՞նչ ազիմուտ ունի։**

1) 0˚
2) 180˚
3) 90˚
4) 360˚

3 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տեղագրական քարտեզներից յուրաքանչյուրն ունի չորս շրջանակ։
2) Աղավաղումներն աշխարհագրական քարտեզում ավելի փոքր են, քան հատակագծում։
3) Տեղագրական քարտեզների յուրաքանչյուր թերթի անվանակարգ այդ թերթը դարձնում է խիստ անհատական։
4) Քարտեզի և գլոբուսի վրա հասարակածին զուգահեռ գծերը կոչվում են միջօրեականներ։

4 **Թվարկված «գերմայրցամաք—պլատֆորմ» զույգից ո՞րն է ճիշտ։**

1) Գոնդվանա—Արևելաեվրոպական
2) Լավրասիա—Սիբիրական
3) Գոնդվանա—Հյուսիսամերիկյան
4) Լավրասիա—Աֆրիկյան

5 **Մթնոլորտի զարգացման անթթվածնային փուլում ո՞ր գազն էր համարվում տիրապետող։**

1) ջրային գոլորշի
2) ազոտ
3) ածխաթթու գազ
4) արգոն

6 **«Ակունք—վտակ—գետ—գետաբերան» շարքերից ո՞րն է *սխալ:***

1) Բայկալ լիճ—Անգարա—Լենա—Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
2) Թանա լիճ—Կապույտ Նեղոս—Նեղոս—Միջերկրական ծով
3) Մեծ Ջրբաժան լեռներ—Դառլինգ—Մուրեյ—Մեծ Ավստրալական ծոց
4) Անդյան լեռներ—Մարանիոն—Ամազոն—Ատլանտյան օվկիանոս

7 **«Հողային տիպ—բնական զոնա—կլիմայական գոտի» շարքերից ո՞րն է *սխալ:***

1) ճմապողզոլային—խառն անտառներ—բարեխառն ցամաքային
2) սևահող—տայգա—բարեխառն ցամաքային
3) կարմրադեղին—հասարակածային խոնավ անտառներ—հասարակածային
4) տունդրագլեյան—տունդրա—մերձարկտիկական

8 **Ո՞ր գետերի ավազանում է ձևավորվել չինական քաղաքակրթությունը:**

1) Նեղոս և Զամբեզի
2) Տիգրիս և Եփրատ
3) Հուանհե և Յանցզի
4) Ինդոս և Գանգես

9 **Թվարկված պետությունները՝ Վանի թագավորություն, Աքեմենյան Պարսկաստան, Կարթագեն, Հռոմեական կայսրություն, քաղաքական քարտեզի ձևավորման ո՞ր փուլին են պատկանում:**

1) նորագույն
2) հին
3) միջնադարյան
4) նոր

10 **«Պետություն—գերակշռող կրոնական ուղղություն» շարքերից ո՞րն է ճիշտ:**

1) Կիպրոս—ուղղափառություն
2) Թաիլանդ—մահայանա
3) Իրան—սուննիականություն
4) Ճապոնիա—հինայանա

11 **Թվարկվածներից ո՞րը երկրի միջազգային մասնագիտացման ճյուղի վիճակագրական հիմնական բնութագրիչ *չէ*.**

1) մեկ մարդու հաշվով թողարկած արտադրանքի ծավալը
2) տվյալ արտադրանքի այդ երկրում առաջին անգամ ստեղծվելը
3) աշխարհում տվյալ ճյուղի ընդհանուր արտադրանքի մեջ այդ երկրի տեսակարար կշիռը.
4) արտահանվող արտադրանքում տվյալ ճյուղի արտադրանքի տեսակարար կշիռը

12 **Ո՞ր օվկիանոսի տարածքի համարյա կեսն է զբաղեցնում մայրցամաքային ծանծաղուտը։**

1) Հյուսիսային սառուցյալ
2) Խաղաղ
3) Հնդկական
4) Ատլանտյան

13 **Թվարկված երկրներից որո՞նց հետ Գերմանիան *չունի* ընդհանուր սահմաններ։**

1) Նիդեռլանդներ և Չեխիա
2) Իտալիա և Լիխթենշթայն
3) Բելգիա և Լյուքսեմբուրգ
4) Լեհաստան և Դանիա

14 **Թվարկված երկրներից որո՞նց պետական կարգն է նախագահական հանրապետություն, իսկ վարչատարածքային կառուցվածքը՝ դաշնային։**

1) Շվեյցարիա և Ավստրալիա
2) Բրազիլիա և Արգենտինա
3) Իտալիա և Հնդկաստան
4) Իսրայել և Լեհաստան

15 **«Տարածաշրջան—պետություն—մայրաքաղաք» շարքերից ո՞րն է ճիշտ։**

1) Հարավարևելյան Ասիա—Լաոս—Դաքա
2) Հարավային Ասիա—Բութան—Թեհրան
3) Հարավարևմտյան Ասիա—Եմեն—Սանա
4) Արևելյան Ասիա—Մոնղոլիա—Մասկաթ

16 **Որտե՞ղ է կյանքի միջին տևողությունը ամենակարճը։**

1) Ավստրալիա
2) Ասիա
3) Աֆրիկա
4) Ամերիկա

17 **Թվարկված մշակաբույսերից որի՞ մշակությամբ է առաջատար Աֆրիկան։**

1) կակաո
2) վուշ
3) ցորեն
4) ջութ

18 **ԱՄՆ թվարկված նահանգներից ո՞րն ունի ելք դեպի Մեքսիկական ծոց։**

1) Լուիզիանա
2) Նեբրասկա
3) Մինեսոտա
4) Ինդիանա

19 **Թվարկված երկրներից ո՞րն է առաջատար աշխարհում ձկան որսի ծավալով։**

1) Հնդկաստան
2) Ինդոնեզիա
3) Չինաստան
4) Ճապոնիա

20 **Ո՞ր ծովին պատկանող կղզու վրա է գտնվում էրեբուս գործող հրաբուխը։**

1) Բելինսհաուզենի
2) Ռոսսի
3) Ուեդդելի
4) Ամունդսենի

21 **Թվարկված երկրներից ո՞րն է առավելագույնս ապահովված նավթի պաշարներով՝ բնակչության 1 շնչի հաշվով (Աշխարհագրություն 11-2017թ.)։**

1) Հնդկաստան – 0,6 մլրդ. տոննա
2) Ռուսաստան – 10,6 մլրդ. տոննա
3) ԱՄՆ – 3 մլրդ. տոննա
4) Չինաստան – 3,9 մլրդ. տոննա

22 **«Լիճ—ծագում—աղիություն—տեղադիրք» համապատասխան շարքերից ո՞ր տարբերակում կա *սխալ*:**

1) Քարի—սառցադաշտային—քաղցրահամ—Արագած լեռ
2) Վանա—տեկտոնահրաբխային—աղի—Հայկական Տավրոսից հյուսիս
3) Ակնա—փլվածքային—աղի—Գեղամա լեռնավահան
4) Սաղամո—հրաբխային—քաղցրահամ—Ջավախքի լեռնավահան

23 **Քաջարանի և Կապանի հանքավայրերը ո՞ր մետաղը *չեն* պարունակում:**

1) անագ
2) ռենիում
3) սելեն
4) կադմիում

24 **ՀՀ ազգային ո՞ր փոքրամասնությունն է առավելապես ապրում Վերին Դվին և Դիմիտրով գյուղերում:**

1) վրացիներ
2) հույներ
3) եզդիներ
4) ասորիներ

25 **Ո՞ր մարզում է գտնվում ՀՀ ամենամեծ ջրամբարը, որը *չի* սահմանակցում այլ երկրի հետ:**

1) Տավուշ
2) Շիրակ
3) Սյունիք
4) Լոռի

26 **ՀՀ ո՞ր բնակավայրում *չկա* հաստոցաշինական գործարան:**

1) Հրազդան
2) Չարենցավան
3) Վանաձոր
4) Ճամբարակ

27 **Ո՞ր միջազգային կազմակերպությունը անմիջականորեն *չի* զբաղվում տարածքային և ազգային հակամարտությունների կարգավորման հարցերով։**

1) ՆԱՏՕ
2) ՆԱԵԿ
3) ՄԱԿ
4) ԵԱՀԿ

28 **Գիտնականների կանխատեսմամբ՝ մոտ ապագայում ո՞ր տարածաշրջանում կարող է ձևավորվել միջպետական մեգալոպոլիս։**

1) Արևմտյան Եվրոպա
2) Հյուսային Աֆրիկա
3) Արևելյան Եվրոպա
4) Հարավային Ասիա

29 **Ո՞ր տարածաշրջանում թերսնվողների բաժինը ամենամեծն է ընդհանուր բնակչության մեջ։**

1) Հարավային Ասիա
2) Կենտրոնական Ասիա
3) Լատինական Ամերիկա
4) Կենտրոնական Աֆրիկա

30 **Թվարկվածներից ո՞րը *չի* մտնում մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչների ցանկում։**

1) մասնագիտացում
2) կենսամակարդակ
3) երկարակեցություն
4) կրթվածություն

31 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ արկտիկական անապատներին.**

1) քամիներից տիրապետող են պասսատները
2) տարածքի ճահճապատվածության բարձր աստիճանը
3) առկա են սառցադաշտային լեզվակները, որոնք առաջանում են լեռնահովտային սառցադաշտերի շարժման հետևանքով
4) բնորոշ է եռահարկ բուսականությունը
5) կենդանիներից հանդիպում է լեմինգը
6) տարածված են գորշ անապատային, դարչնագույն հողերը
7) տարեկան տեղումների քանակը գերազանցում է հազար մմ-ը

32 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Ամենաչոր մայրցամաքում է գտնվում ցամաքային ամենացածր իջվածքը։
2) Տարածքի մակերեսով առաջին և երրորդ տեղերն զբաղեցնող մայրցամաքներն իրարից բաժանվում են Բերինգի նեղուցով։
3) Տարածքի մակերեսով առաջին և երկրորդ տեղերն զբաղեցնող օվկիանոսներն իրար միանում են Դրեյկի նեղուցով։
4) Տարածքի մակերեսով հինգերորդ և վեցերորդ տեղերն զբաղեցնող մայրցամաքների ամենաբարձր կետերի բացարձակ բարձրությունների տարբերությունը չորս հազար մ է։
5) Տարածքի մակերեսով երրորդ և չորրորդ տեղերն զբաղեցնող մայրցամաքներն իրարից բաժանվում են Քիլի ջրանցքով։
6) Ամենախոնավ մայրցամաքի արևմտյան մասում է գտնվում աշխարհի ամենաչոր անապատը։
7) Ամենացուրտ աշխարհամասում է ապրում աշխարհի ամենափոքր թռչունը։

33 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Սյունիքի մարզը ուրբանիզացման մակարդակով չորրորդն է։
2) Արագածոտնի մարզի հիմնական ջրային զարկերակը Հրազդանն է՝ Գեղարոտ և Ամբերդ գլխավոր վտակներով։
3) Արարատի մարզի լեռնային մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի, Դահնակի ու Երանոսի միջին բարձրության լեռները։
4) Լոռու մարզը զբաղեցնում է նախկին պատմական Հայաստանի Այրարատ նահանգի արևելյան կեսը։
5) Գեղարքունիքի մարզը ՀՀ-ում առաջինն է կարտոֆիլի և հացահատիկի ցաքատարածություններով ու դրանց համախառն բերքով։
6) Շիրակի մարզը հարուստ է բազմամետաղային օգտակար հանածոներով։
7) Կոտայքի մարզը բնակչության թվով և միջին խտությամբ ՀՀ-ում երրորդն է։

34 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Երկնասլաց արևելյան սոսու պուրակը տարածվում է Արփա գետի ջրհավաք ավազանում:
2) «Դիլիջան» ազգային պարկը գտնվում է Գետիկ և Աղստև գետերի ջրհավաք ավազանում:
3) «Սևան» ազգային պարկում պահպանվում է կենու պուրակը, որը հազվագյուտ է ամբողջ Կովկասում:
4) «Արփի լիճ» ազգային պարկում հատուկ պահպանության տակ են գտնվում հազվագյուտ թռչունները՝ գանգրափետուր հավալուսնը և մարգահավը:
5) ՀՀ տարածքում պետական արգելոցներ են Արևիկը, Խոսրովը և Էրեբունին:
6) Էրեբունու արգելոցի գլխավոր նպատակը հացազգիների վայրի տեսակների գենոֆոնդի պահպանությունն է:
7) ՀՀ առավել վտանգված և անհետացման եզրին գտնվող կաթնասուններից են բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, երկարականջ ոզնին:

35 **Հետևյալ պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) ՄԱԳԱՏԷ-ն զբաղվում է համաշխարհային առևտրի կարգավորման հարցերով:
2) Գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների քննարկումը ՄԱԿ-ի մակարդակով առաջին անգամ տեղի ունեցավ 1952 թվականին Ստոկհոլմում:
3) 1992 թվականին Ռիո դե Ժանեյրոյում կայացած միջազգային կոնֆերանսին մասնակցում էին աշխարհի 179 երկրների պատվիրակություններ՝ այդ թվում նաև ՀՀ պատվիրակությունը:
4) «Եվրոպայի քաղաքները կայուն զարգացման ճանապարհին» հրովարտակն ընդունվել է Նորվեգիայում:
5) 2002 թվականին Հարավաֆրիկյան Հանրապետության Յոհաննեսբուրգ քաղաքում տեղի է ունեցել «Հանուն կայուն զարգացման՝ գործընկերության ընդլայնման» վեհաժողովը:
6) ՄԱԿ-ի հատուկ մասնագիտացված բնապահպանական կազմակերպություններից է ՅՈՒՆԵՊ-ը, որի գործունեության գլխավոր ուղղություններից է բնական միջավայրի համամոլորակային մոնիթորինգը:
7) ՅՈՒՆԵՍԿՕ-ն աշխատում է բնապահպանական կրթության և գիտելիքների տարածման բնագավառում:

36 **Էկոլոգիական լարվածության մեծացման արտահայտման հետևյալ սոցիալական հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) թունավոր տեխնոլոգիաների և թափոնների այլ երկրներ տեղափոխելը
2) պարենամթերքի պակասը
3) բնակչության հիվանդությունների աճը և նոր հիվանդությունների առաջացումը
4) բնակչության բնական աճը խթանող ժողովրդագրական քաղաքականության իրականացումը
5) համաշխարհային առևտրի աշխուժացումը
6) համաշխարհային զբոսաշրջության ակտիվացումը
7) բնակչության շրջանում էկոլոգիական փախստականների առաջացումը

37 **Թվարկվածներից ո՞ր պետություններում է դիտվում ժողովրդագրական ճգնաժամը:**

1) Եթովպիա
2) Նիգերիա
3) Զամբիա
4) Բելոռուս
5) Բուլղարիա
6) Դանիա
7) Ռումինիա

38 **Թվարկվածներից ո՞ր պետությունները ելք *չունեն* դեպի ծով:**

1) Ուրուգվայ և Կոլումբիա
2) Տաջիկստան և Ղրղզստան
3) Լյուքսեմբուրգ և Շվեյցարիա
4) Ֆինլանդիա և Իռլանդիա
5) Բանգլադեշ և Պակիստան
6) Ռուանդա և Բոթսվանա
7) Պարագվայ և Բոլիվիա

39 **Թվարկված միջազգային կազմակերպություններից որո՞նց *չի* անդամակցում ՀՀ-ն:**

1) Հյուսիատլանտյան դաշինքի պետություններ
2) Միավորված ազգերի կազմակերպություն
3) Առողջապահության միջազգային կազմակերպություն
4) Արբանյակային կապի միջազգային կազմակերպություն
5) Արժույթի միջազգային հիմնադրամ
6) Սևծովյան տնտեսական համագործակցություն
7) Հարավարևելյան Ասիայի պետությունների ասոցիացիա

40 **Թվարկված երկրներից որո՞նք առաջատար *չեն* մեղվաբուծության արտադրանքի ծավալով:**

1) Ռուսաստան
2) Եգիպտոս
3) Բանգլադեշ
4) Սինգապուր
5) ԱՄՆ
6) Ֆրանսիա
7) Մեքսիկա

41 **Թվարկված երկրներից որո՞նք են մտնում էլեկտրաէներգիայի արտադրությամբ աշխարհի առաջատար եռյակի մեջ:**

1) Կանադա
2) Ֆրանսիա
3) Բրազիլիա
4) ԱՄՆ
5) Չինաստան
6) Հնդկաստան
7) Գերմանիա

42 Աշխարհի առևտրային նավատորմի առաջատար երկրներից են (նավերի քանակով).

1) Կամբոջան
2) Լիբերիան
3) Պանաման
4) Չինաստանը
5) Հունաստանը
6) Մոզամբիկը
7) Անգոլան

43 Երկու ընկեր ճանապարհորդում են: Պարզվեց, որ նրանք գտնվում են նույն բնակավայրում, մեկը գնացքի մեջ է, մյուսն՝ ուղղաթիռի: Հանկարծ ուղղաթիռում լսվեց, որ դրսում ջերմաստիճանը -12˚C: Հետաքրքրությունից դրդված գնացքում գտնվող ընկերը պատուհանից տեսավ ցուցանակի վրա նշված +6˚C: Հաշվել ընկերների բացարձակ բարձրությունների տարբերությունը (հաշվարկը կատարել 6˚C-ով):

44 Ինքնաթիռը թռավ Մոսկվայից (3-րդ ժամային գոտի) դեպի Լոնդոն ժամը 19^{00} –ին տեղական ժամանակով (Մոսկվայի ժամանակով): Վայրէջք կատարեց 20^{00} –ին: Քանի՞ ժամ տևեց թռիչքը:

45 Ա և Գ քաղաքները գտնվում են միևնույն զուգահեռականի վրա: Որոշել, թե որ միջօրեականի վրա է գտնվում Ա բնակավայրը, եթե Արեգակը զենիթում լինում է 48 րոպե ավելի ուշ, քան Գ բնակավայրում, որը գնտվում է հս.լ. 13˚ և արլ.ե. 58˚-ում:

46 Որոշել Ակոնկագուա լեռան (6960 մ բացարձակ բարձրությամբ) և Վալդես թերակղզու (-40 մ բացարձակ բարձրությամբ) մթնոլորտային ճնշումների տարբերությունը մմ ս.ս-ով (հաշվարկը կատարել 100 մմ-ով):

47 Որոշել քարտեզ 1-ի Բ կետում Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ի կեսօրին:



քարտեզ 1

48 Հաշվել քարտեզ 2-ի Թ և Ի կետերի կիլոմետրային հեռավորությունը:



քարտեզ 2

49 Աղյուսակ 1-ի տվյալներից օգտվելով՝ հաշվել ջերմաստիճանի տատանման լայնույթը (ամպլիտուդա):

Օրական ջերմաստիճաններ հուլիսի 1-10										
մարզ	1.07	2.07	3.07	4.07	5.07	6.07	7.07	8.07	9.07	10.07
Լոռի	+6˚C	+7˚C	+9˚C	+10˚C	+11˚C	+10˚C	+10˚C	+12˚C	+13˚C	+12˚C

աղյուսակ 1

50 Աղյուսակ 1-ի տվյալներից օգտվելով՝ հաշվել հուլիսի առաջին տասնօրյակի միջին ջերմաստիճանը։

51 Օդի բացարձակ խոնավությունը 30 գ/մ³ է, հարաբերական խոնավությունը՝ 60%։ Որոշել ամբողջապես հագեցման համար անհրաժեշտ պակասող ջրային գոլորշիների քանակը։

52 Հաշվել 126 000 տ պայմանական վառելիք ստանալու համար անհրաժեշտ նավթի քանակը, եթե վերջինիս ջերմային գործակիցը 1,5 է։

53 Որոշել բնակչության միջին խտությունը, եթե մարզի գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 48 000 հա է, իսկ 1 բնակչին բաժին է ընկնում 12 հա գյուղատնտեսական հողահանդակ: Մարզի տարածքի մակերեսը 250 կմ^2:

54 Երկրի ավտոճանապարհների միջին խտությունը կազմում է 25 կմ/ կմ^2 է, ավտոճանապարհների երկարությունը՝ 600 000 կմ: Որքա՞ն մակերես կզբաղեցնի տվյալ երկիրը 1 : 4 000 000 մասշտաբի քարտեզում:

55 Երկրի բնակչության թիվը 17 000 000 մարդ է, ծնելիության գործակիցը 0,9% է, մահացության գործակիցը՝ 0,7%, մեխանիկական աճի՝ գործակիցը 12‰: Որքա՞ն կլինի բնակչության թիվը 1 տարի հետո:

56 Երկրի բնակչության թիվը 9 000 000 մարդ է, ուրբանիզացման մակարդակը 67%: Որքա՞ն է կազմում գյուղաբնակների բացարձակ թիվը:

57 Երկրի նավթի ընդհանուր պաշարները կազմում են 2,8 մլրդ. տ, իսկ տարեկան հանույթը՝ 40 մլն. տ: Որքա՞ն կլինի ռեսուրսապահովվածությունը:

58 Երկրում ցորենի ցանքատարածությունների մակերեսը 3 մլն. հա է, համախառն բերքը՝ 15 մլն. տ: Որքա՞ն է ցորենի միջին բերքատվությունը (ց/հա):

59 Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 3600 մ է, իսկ գետաբերանինը՝ 1800 մ: Նրա երկարությունը 60 կմ է: Որքա՞ն կլինի գետի թեքությունը:

60 Գետի լայնությունը 7 մ է, միջին խորությունը 78 սմ, ջրի արագությունը՝ 5 մ/վ: Որքա՞ն կլինի գետի հոսը 4 ժամում: